Ռաֆֆի

Պոետ

Թո՛ղ կույր ամբոխը ծաղրե քեզ, պոետ,
Թե երազամոլ քո հոգվո ցնորք՝
Դարուս իրական պահանջմանցը հետ՝
Էլ չէ համաձայն, զո՛ւր է քո շնորք:

Եվ խաժամուժի պետք չէ քեզ գովեստ,
Թո՛ղ ասեն՝ մարդու կյանքը գործնական
Պահանջում է հաց, ապրուստ և արհեստ,
Եվ ոչ սնոտիք բանաստեղծական:

Դու, մուզաների որդի սիրելի,
Անվեհեր սրտով հնչեցո՛ւր քնար,
Երգ քո ոգելից, վերին ազդմամբ լի
Մինչև հավիտյան կըսիրե աշխար:

Թո՛ղ արհեստասեր չոր փիլիսոփան
Քարոզե կյանքի մարմնավոր հոդված,
Բայց դու, հոգեկան խորհրդոց թարգման,
Քո սուրբ շրթունքով խոսում է աստված:

Երգե՛ դու պոետ, երգե՛ երգ անուշ,
Հնչեցուր քնարիդ լարերն ուժգին,
Եվ ոգևորված քո տաղեր քնքուշ
Գուցե զարթեցնեն հայի քնած հոգին…